ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/3.2-2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մարտի 3-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ |
| Դ.Կարապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ |
| Ա.Բաբայան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ |
| Լ.Բասմաչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Զ.Հայրապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

***Լսեցին՝***

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

**Նշվեց, որ**

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «Մենք Փրոդաքշն» ՍՊԸ-ի,
- «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի,
- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 3 (երեք) կազմակերպության՝

- «Մենք Փրոդաքշն» ՍՊԸ-ի,
- «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի,
- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի կողմից:

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«Մենք Փրոդաքշն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

- 1-ին ենթակետով պահանջվող կանոնադրությունը (վերջին խմբագրությամբ) բացակայում է,

- 8-րդ ենթակետով պահանջվող ցուցահանդեսի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշվում՝ տեղեկատվություն իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի գնի և դրանց համար նախատեսվող ծախսերում նշված է աշխատավարձ, ինչը հակասում է հրավերի 2.3 կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջին (Սույն կետով սահմանված ծառայություն մատուցող աշխատակիցների համար դրամաշնորհի շրջանակներում դրամական փոխհատուցում աշխատավարձի ձևով չի նախատեսվում):

- 9-րդ ենթակետով պահանջվող՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից միջոցառման անցկացման համաձայնության վերաբերյալ տեղեկանքը բացակայում է:

- **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում՝

հրավերի 2.4 կետի.

- 1-ին ենթակետով պահանջվող ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության) քաղվածքի ժամկետը չի համապատասխանում պահանջին,

- 5-րդ ենթակետով սահմանված պորտֆոլիոն ստորագրված և կնքված չէ:

- 6-րդ ենթակետով սահմանված պետական, ՏԻՄ և/կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ (ներկայացնել համագործակցության արդյունքում կնքված պայմանագրերը, ներառյալ հանձման ընդունման ակտերը և այլն) տեղեկատվության մեջ բացակայում են համագործակցության արդյունքում կնքված պայմանագրերը, ներառյալ հանձման ընդունման ակտերը:

- 9-րդ ենթակետով պահանջվող՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից միջոցառման անցկացման համաձայնության վերաբերյալ տեղեկատվություն ներկայացված է միայն Թումանյանի անվան այգու վերաբերյալ, սակայն ծրագրում նշված է այլ այգի ևս:

• **«Արեգակ Արդար» ՍՊԸ**-ի կողմից Armeps համակարգ հրավերով նախատեսված որևէ փաստաթուղթ ներբեռնված չէ:

***Կայացավ քննարկում, որի արդյունքում***
***Հանձնաժողովը միաձայն որոշեց՝***

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 3 (երեք) կազմակերպության՝

• «Մենք Փրոդաքշն» ՍՊԸ-ի,
• «ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի,
• «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

| | | |
|---|---|---|
| Ա.Մկրտչյան<br>(Հանձնաժողովի նախագահ) | - | _____ |
| Դ.Կարապետյան | - | _____ |
| Ա.Բաբայան | - | _____ |
| Զ.Հայրապետյան | - | _____ |
| Լ.Բասմաչյան | - | _____ |
| Շ.Հովսեփյան | - | _____ |